8449

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«23» 05 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0061-22

Ձեռնարկողը՝ ***«Դարի Քար» ՍՊԸ***
Արագածոտնի մարզ,
Կաքավաձոր համայնք 1 փողոց, տուն 35

Գործունեությունը՝ ***Կաքավաձորի տուֆերի հանքավայրի «Դարի Քար» տեղամասում նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0061-22

<23> 05 2022թ.

Արագածոտնի մարզի Կաքավաձորի տուֆերի հանքավայրի «Դարի Քար» տեղամասում նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Դարի Քար» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Երկրաբանական ուսումնասիրության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Գ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արագածոտնի մարզ, Թալին (Կաքավաձոր) համայնք

Արագածոտնի մարզի Կաքավաձորի տուֆերի հանքավայրի Դարի Քար տեղամասի 3.71հա մակերեսով տարածքում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրություն, նպատակ ունենալով պարզաբանել տուֆերի որակական հատկանիշները, որոնք պետք է բավարարեն համապատասխան տեխնիկական պահանջներին՝ դրանց պիտանելիությունը որպես ուղիղ կտրվածքի պատքարի արտադրության համար: Երկրաբանահետախուզական աշխատանքները կիրականացվեն հորատանցքերի և մերկացումների միջոցով:

Նկարագրական մաս.

Կաքավաձորի տուֆերի հանքավայրի Դարի Քար տեղամասի տուֆերի երևակումը վարչական տեսակետից գտնվում է Արագածոտնի մարզի Թալին համայնքում և տեղակայված է Կաքավաձոր բնակավայրից մոտ 4.3 կմ հարավ և զբաղեցնում է 3.71հա մակերեսով տարածք: Տեղամասի հրաբխային տուֆերի երևակման տարածքը գտնվում է 1365-1380մ բացարձակ բարձրություններին:

Արագածոտնի մարզի Կաքավաձորի տուֆերի հանքավայրի Դարի Քար տեղամասի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 կոորդինատային համակարգով հետևյալն է.

X1 – 4465226	Y1 - 8419770
X2 – 4465234	Y2 - 8419906
X3 – 4465067	Y3 - 8420032
X4 – 4465023	Y4 - 8419915
X5 – 4465070	Y5 - 8419907
X6 – 4465005	Y6 - 8419800

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՈՒ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Տուֆերի հաստվածքի ընդհանուր հզորությունը նախնական դիտարկումներով տատանվում է 20.0-25.0 մետրի սահմաններում, կազմելով միջինը 22.0-23.0մ: Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրության նպատակով նախատեսվում է յուրաքանչյուր հորատանցքից վերցնել մինչև 5.0մ երկարությամբ հանուկային նմուշներ: Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թագիկներով, 132մմ և 112մմ տրամագծերով, ԶԻԼ131 տիպի ինքնագնաց հորատող հաստոցով: Նախատեսվում է հորատող հաստոցի 9 տեղակայում և տեղահանում: Հետախուզվող տեղամասում օգտակար հանածոյի եզրագծման և ըստ խորության ուսումնասիրման համար նախատեսվում է հորատել 9 հորատանցք մինչև 25մ խորությամբ: Հորատահանուկի նվազագույն ելքը՝ 80-85%: Երկրաբանական փաստագրման աշխատանքների ծավալները ըստ տեսակների՝ հորատահանուկի փաստագրում՝ 225.0գծմ, փորձնական բացահանքի փաստագրում՝ 60.0մ: Տուֆերի լեռնային զանգվածից պատքարի ելքի տոկոսը որոշելու համար նախատեսվում է մեկ փորձնական բացահանքի անցում: Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 40 հանուկային նմուշ մինչև 5.0մ երկարությամբ, 2 մենաքար բացահանքից, ինչպես նաև 2 նմուշ պետրոգրաֆիական ուսումնասիրությունների ու 2 նմուշ քիմիական կազմը որոշելու համար: Ֆիզիկամեխանիկական հատկանիշները կուսումնասիրվեն 42 նմուշներով, քիմիական կազմի վերլուծությունները կկատարվեն 2 նմուշի միջոցով, պետրոգրաֆիական ուսումնասիրությունները կիրականացվեն 2 նմուշի միջոցով:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների բնութագիրը.

- Մթնոլորտային օդ. Ավտոտրանսպորտը և հորատման աշխատանքները դառնալու են որոշ քանակությամբ վնասակար գազերի և փոշու արտանետման աղբյուր: Երևակման տարածքում աշխատանքների իրականացման ժամանակ վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված թույլատրելի խտությունները:
- Ջրային ավազան. Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ մոտակա ջրային հոսքը անցնում է երևակման տարածքից մոտ 200մ արևելք; Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:
- Հողային ծածկույթ. Երևակման տարածքը հարթավայրային է, հորատման հարթակների և ճանապարհների կառուցում չի նախատեսվում: Հորատման աշխատանքներից հետո՝ հողերի բնական վերականգնումն և վերին հորիզոնների աէրացիան ապահովելու համար կատարվելու է փխրեցում, ինչը կարագացնի բուսականության ինքնավերականգնման պրոցեսը:
- Բուսական և կենդանական աշխարհ. Հողերի և բուսածածկի խախտումը փորձնական բացահանքի սահմաններում լինելու է խիստ կարճատև: Կենդանական աշխարհի համար անհանգստացնող գործոն է հանդիսանալու հորատման աշխատանքների հետ կապված աղմուկը և թրթռումները:

02543163
ՓՈՐՁԱՓՆԱՀԱՏ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- Բնության հատուկ պահպանվող տարածքներ. Բնության հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական ազդեցություններ չի դրսևորվելու, քանի որ մոտակա «Արագածի ալպյան» արգելավայրը գտնվում է տեղամասից մոտ 19կմ հեռավորության վրա:
- Պատմության և մշակույթի հուշարձաններ. Պատմամշակութային հուշարձանների վրա վրա բացասական ազդեցություններ չի դրսևորվելու, քանի որ Դարի Քար տեղամասի և մոտակա պատմամշակության հուշարձանի հողերի միջև հեռավորությունը կազմում է 1.85կմ:
- Թափոնների գոյացում. Երկրաբանական ուսումնասիության աշխատանքների ժամանակ տեղամասի տարածքում առաջանալու են թափոնների հետևյալ տեսակները՝ մակաբացման ապարներ, հորատման թագիկներ, նավթամթերքի և քսայուղերի մնացորդներ, կենցաղային աղբ:

Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունների նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների բնութագիրը. Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Արտանետվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :
- Լեռնային զանգվածի ջրցան փորձնական արդյունահանման ժամանակ: Տեխնիկական ջուրը ավտոցիստեռնով տեղամասի տարածք է տեղափոխվելու մոտակա Կաքավաձոր գյուղից:
- Կեղտաջրերի հավաքումը դաշտային հորատիպ զուգարանում, որը աշխատանքների ավարտից հետո դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով: Ծառայությունը մատուցվում է պայմանագրային հիմունքներով:
- Փորձնական բացահանքի տարածքում իրականացվելու է խախտված տարածքների ռեկուլտիվացիա: Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է փորձնական հանույթի ժամանակ հանել հողի այդ շերտը, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո այն օգտագործել լանդշաֆտի վերականգնման նպատակով: Վերականգնումը իրականացվելու է ձեռքով: Ռեկուլտիվացիայի ենթակա հողաբուսական շերտի ծավալը կազմում է 108.0խմ (60.0մ x 0.15մ x 12.0մ):

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ առաջանում են չորս տիպի թափոններ.

- Մակաբացման ապարներ, որոնք ներկայացված են ալյուվիալ առաջացումներով: Մակաբացումից առաջացած ապարները իներտ են, ոչ վտանգավոր, չեն ենթարկվում էական ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական վերափոխումների:
- Տեղամասի տարածքում հորատման աշխատանքների ժամանակ առաջացող թափոնները՝ օգտագործված հորատման թագիկները, հավաքվելու և տեղամասից հեռացվելու են հորատման աշխատանքները իրականացնող մասնագիտացված ընկերության կողմից:
- Նավթամթերքների և քսայուղերի մնացորդները հավաքվելու են հատուկ անթափանց տակառների մեջ, աշխատանքների ավարտից հետո հանձնվելու են մասնագիտացված ընկերությանը՝ վերամշակման նպատակով:

02543183
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- Կենցաղային թափոնները կհավաքվի հատուկ պարկերի մեջ և կտեղափոխվի մոտակա աղբահավաք կետեր, որտեղից դրանք պարբերաբար համայնքի կոմունալ ծառայության կողմից կտեղափոխվեն են շրջանի աղբավայր:
- Մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չի գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում՝ 80դԲԱ:
- Աշխատանքների կատարման ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ կատարվելու են մթնոլորտային օդում փոշու, ծխագազերի, նավթամթերքներով հողերի աղտոտվածության և տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակի, աճելավայրերի, ինչպես նաև ապրելավայրերի տարածքի և պոպուլյացիայի փոփոխություն մշտադիտարկումներ:

Մշտադիտարկումների համար նախատեսվում է տարեկան 100000 ՀՀ դրամ:
Բնապահպանական միջոցառումների համար՝ 150000 ՀՀ դրամ:
Ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման համար ընկերության կողմից նախատեսվում է 216000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ.

Ամփոփելով փորձաքննության արդյունքները, պետք է նշել, որ հայտը մշակվել է բնապահպանական և ընդերքօգտագործման ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմատիվաիրավական ակտերին համապատասխան: Համաձայն հայտի ուսումնասիրության աշխատանքները կատարվելու են առանց պայթեցման, ջրային ավազանի աղտոտում տեղի չի ունենալու, քանի որ հանքավայրի տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է տարածաշրջանում շինարարական նյութերի պահանջարկի բավարարման նպատակով:

Փորձաքննության ընթացքում հայտը շրջակա միջավայրի նախարարության դիտողություններով ու առաջարկություններով լրամշակվել է: Փորձաքննական գործընթացին մասնակցել են արտակարգ իրավիճակների, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, մարզպետարանը: Օրենսդրությամբ սահմանված կարգով Թալին համայնքի Կաքավաձոր բնակավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինը և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Փորձաքննական պահանջներ.

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերին, բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրի պահանջներին:
2. Կատարել հայտով ամրագրված միջոցառումների և մոնիթորինգի իրականացման աշխատանքները, դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ, պահպանելով բնապահպանական բոլոր նորմերը:
3. Աշխատանքների կատարման ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող, կենդանական և բուսական աշխարհ և այլն), ինչպես

02543103 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

նաև մակերևույթային և լեռնային ապարների տեղաշարժի մոնիթորինգի արդյունքները և հետնախագծային վերլուծության ծրագիրը համապատասխան պահանջի դեպքում պետք է տրամադրվի պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը:

4. Աշխատանքների կատարման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հավաքումը և հեռացումը (այդ թվում վտանգավոր թափոններ՝ յուղեր, քսայուղեր, անվադողեր և այլն) անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման պահանջով, գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեքների կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

6. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը՝

- փոշենստեցման նպատակով՝ ջրցան,
- կեղտաջրերի հավաքում դաշտային հորատիպ զուգարանում,
- խախտված տարածքների ռեկուլտիվացիայի իրականացում, հողի բերրի շերտի պահեստավորում, ծածկում (հողաշերտով), աշխատանքների ավարտից հետո օգտագործում՝ լանդշաֆտի վերականգնման նպատակով,
- մթնոլորտային օդի աղտոտվածության պարբերաբար հսկողության սահմանում, արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումների կատարման միջոցով,

7. Իրականացվող աշխատանքների ընթացքում պահպանել ՏԿԵ նախարարի 2020 թվականի հունվարի 30-ի թիվ 01-Ն հրամանով սահմանված երկրաբանական ուսումնասիրության համար անհրաժեշտ փորձնական հանույթի ֆիզիկական ծավալները:

8. Իրականացվող աշխատանքների ընթացքում պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Դարի Քար» ՍՊԸ -ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Կաքավաձորի տուֆերի հանքավայրի «Դարի Քար» տեղամասի 3.71հա մակերեսով տարածքում նախատեսվող օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ - ի
առաջատար մասնագետ՝ Կ. Հարությունյան